

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԳԱՐԶՅԱԼ Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ «ՀԻՇՍԱԿԱՐԱՆԻ» ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. քեկեածու Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Միջայել Նալբանդյանի կյանքի և գրական-հասարակական գործունեության հետ առնչվող մեկից ավելի ժամանակահատվածներ դեռ լի են իրենց պարզաբանմանն սպասող «սպիտակ կետերով», որոնց ըստ ամենայնի բացահայտումը հանդիսանում է մեր բանասիրության առաջնահերթ խնդիրներից մեկը։ Այս առումով անելիքները դեռևս շատ են նրա հանրածանոթ «Հիշատակարանի» կապակցությամբ։ Հատկապես անհրաժեշտ է նշել այդ գործի երևանյան հրատարակությունը Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» առաջին հատորում (Երևան, 1945, էջ 305—488), որը ջանասիրաբար ու գիտական անհրաժեշտ խնամքով իրականացրել է Ն. Մուրադյանը։ Դրանով հանդերձ, «Հիշատակարանում» նշված ոչ քիչ թվով կարևոր իրադարձություններ, զանազան անձնանուններ ու տեղանուններ կամ ծանոթագրվել են անբավարար ու մակերեսայնորեն, կամ էլ պարզապես չեն ծանոթագրվել։ Բնականոն հետևանքն այն է եղել, որ դրանք նախ՝ անհասկանալի են մնում այսօրվա ընթերցողի համար, և երկրորդ՝ դրանց պարզաբանումն ու մասնագիտական վերծանությունը օգնում է մեզ հասկանալու Մ. Նալբանդյանի հետ առնչվող կարևոր մանրամասներ։

Էջ 378¹. բանավիճելով իր գաղափարական հակառակորդ Մովսես Իսահակյանցի հետ, Նալբանդյանը գրում է. «Մի գուցե պ[արոն] Իսահակյանցը պ[արոն] Դյումայի կոմս Ֆենիքսի նման ամենայն բան գուշակում է, գործ դնելով Մեսմերի արվեստը»։ Կոմս Ֆենիքսի առթիվ տրված ծանոթագրության մեջ (№ 48) կարդում ենք. «Մեզ չհաջողվեց պարզել, թե Դյումայի բազմաթիվ վեպերից որի հերոսն է այս կոմս Ֆենիքսը»։

Նալբանդյանը նկատի ունի Ալեքսանդր Դյումա-հոր «Բժշկի գրառումներ» երկհատորանոց վեպը, որը հրատարակվել է Փարիզում, 1848 թ. «Memoires d'un medecin» ընդհանուր խորագրով (ունի նաև «Joseph Balsamo» ենթավերնագիրը և հաճախ կոչվել է նաև այդ՝ «Ժոզեֆ Բալսամո» ձևով) և որը ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսել Պետերբուրգում 1863 թ. նույն՝ «Знаменский врач» խորագրով։ Վեպի բազմաթիվ հերոսներից մեկն է նաև բժշկական ֆակուլտետի ուսանող կոմս Ֆենիքսը՝ ընդունակ, բնածին խելքի և ուշի-

¹ Այստեղ և հետագայում էջերը նշված են ըստ՝ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1945, հ. I, հրատարակության (այսուհետև՝ Մ. Նալբանդյան...)։ Անհրաժեշտության դեպքում օգտվել ենք «Հյուսիսային» այն համարներից, որտեղ տպագրված է եղել մեզ հետաքրքրող հատվածը։

մության տեր, բայց անլուրջ ու թեթևասրտիկ, կանանց ու գինարբուքներ սիրող մի մարդ, որը թե՛ ուսման տարիներին և թե՛ մանավանդ ուսումնառությունն ավարտելուց հետո տարվում է մեսմերիզմով, այսինքն՝ բոլոր տիպի հիվանդությունները համապատասխան դեղերով ու դեղամիջոցներով բուժելու փոխարեն, արևից ու լուսնից երկրին հասնող ճառագայթների օգնությամբ հայտնաբերելու և «բժշկելու» իր ժամանակին շատ տարածված «գիտություն»։ Հետևանքն այն է լինում, որ կոմս Ֆենիքսը վերջնականապես ձեռք է բերում անլուրջ ու նանրամիտ մասնագետի համբավ։

Այս է, համառոտակի, Նալբանդյանի՝ հեգնական տոնով ասված խոսքի ենթիմաստը, որ չի ծանոթագրված։ Չի ծանոթագրված նաև, թե ինչ բան է նույն տեղում ակնարկված «Մեսմերի արվեստը» և ով է Մեսմերը, որի մասին արդեն գրել ենք²։ Իսկ քանի որ իր «Հիշատակարանի» 1858 թ. հոկտեմբերյան համարում Դյումա-հոր վերոհիշյալ վեպն ակնարկող Նալբանդյանը չէր կարող կարդալ 1863 թ. Պետերբուրգում հրատարակված նրա ուսերեն թարգմանությունը, ուրեմն պետք է եզրակացնել, որ նա այդ վեպը կարդացել էր բնագրով։ Ավելացնենք նաև, որ հիշյալ վեպը, Ֆրանսերեն լեզվով, գտնվում է Նալբանդյանի անձնական գրադարանի գրքերի թվում։

Էջ 396. Նալբանդյանը գրում է. «Հյուսիսում... բնակվում է ցրտաշունչ և դաժան Բորեասը, որը խլում է աղքատ շինականի տան ծածքը»։ Քիչ հետո. «Բորեասը, յուր մահաշունչ բևեռային սառնությամբ կտրում է այդ ողորմելի բուսականի կյանքը»։ Նույն էջում, փոքր-ինչ ավելի հետո. «Հյուսիսային Բորեասից³ շատ վատ են արևմտյան խոնավությունքը»։ Այս կապակցությամբ անհրաժեշտ էր նշել հետևյալը։

Ըստ հունական դիցաբանության, քամիների աստված էոլոսի իշխանության ներքո գտնվում էին չորս եղբայր-քամիներ. Նոտոսը, էվրոսը, Ջեփյու-ոսը և Բորեասը, որոնց նա բաց էր թողնում ըստ իր ցանկության ու քմահաճույքի։ Դրանցից ամենակատաղին Բորեասն էր՝ հյուսիսային քամին (հուն. «Բորեաս» նշանակում է «հյուսիս»), որի դաժան շունչը ոչնչացնում էր ամեն մի կենդանություն, շղթայում էր հողը ձյան ու սառույցի հաստ շերտով և կանաչազարդ ու կենսախիսնդ երկիրը վերածում էր սառցային, անկենդան անապատի։ Այս ձևով էլ նա նկարագրվել է հունական դասականների մոտ, այս ձևով էլ երգվել է հունական (և ոչ միայն հունական) բառ ու բանում, և ինչպես դժվար չէ նկատելը, այդ առումով էլ օգտագործել է Նալբանդյանը։

Էջ 411. Նալբանդյանը հուշումնառատ խոսակցություն է սկսում իր «Հիշատակարանի» հետ. «Ես քո համար երբեք ծուլացած չեմ. միթե մոռացա՞ր որ քո մի հատվածը (տպած Հյուսիսամիայլ, հուլիս, 1858 թ.) գրեցի մի ամարանոցում, ուր մի քանի բարեկամով գնացել էինք օդ վայելելու։ Գնացի՞ ես նոցա հետ ման գալու...»։

«Հիշատակարանի» այս հատվածին և մանավանդ ակնարկված «մի ամարանոցի» վերաբերյալ պարզաբանումներ կատարելուն, որքան մեզ հայտնի է,

² Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 3 («Լրացումներ Մ. Նալբանդյանի «Հիշատակարանի» ծանոթագրություններին»)։

³ Ի դեպ, այս վերջին դեպքում «Նալբանդյան...»-ում «Բորեասը» տպագրվել է փոքրատառ, որն անշուշտ պարզ վերիպման արդյունք է։

առաջին անգամ անդրադարձել է հանգուցյալ գրականագետ Արամ Ինճիկյանը⁴։ Ծշտման հարցում մեզ օգնության է հասնում իր՝ Մ. Նալբանդյանի հանրահայտ «Մեռելահարցուկ» վեպը, որն ինչպես հայտնի է, իր վիպական բանվածքով հանդերձ, մեծապես հագեցած է ինքնակենսագրական տարրերով։ Վեպն սկսվում է հետևյալ կարևոր տողով. «1858 թ. մայիս ամիսն էր։ Դեռ նոր լուսացել էր առավոտը...»։ Մայիսյան օրվա բարեմասնությունները նկարագրելուց հետո հեղինակը գրում է. «Շատ ժամանակ չէ որ ես պատահեցա Կունցով ազարակում մի քանի հայ երիտասարդների...»։ Եզրակացությունն այսպիսով այն է, որ 1858 թ. գարնան-ամռան ամիսներին Նալբանդյանը հանգստանալու նպատակով հաճախակի լինում էր (գուցե և ապրում էր) Մոսկվայից հարավ-արևմուտք գտնվող Կունցեվո (նաև՝ Զնամենսկոյե) ամառանոցային գյուղակում։ Իսկ քանի որ «Հիշատակարանի» վերոհիշյալ՝ 1858 թ. հուլիսին հրատարակված հատվածը պետք է որ գրված լիներ գոնե մեկ-մեկուկես ամիս առաջ, այսինքն 1858 թ. մայիսի կես—հունիսին, ապա պարզ է, որ նշված հատվածը գրվել է այնտեղ, հետևաբար Նալբանդյանի ակնարկած «մի ամարանոցը» Կունցեվոն է։

Էջ 411—412-ում կարդում ենք. «Երկար և անդադար ճանապարհորդությունքը Եվրոպայում, ամսօրյա ժամանակով դեգերվիլը հանքային ջրերում, տկարության կատաղաբար զայրանալը... զրկել էին ինձ կարողությունից գրիչ ձեռք վեր առնուլ»։ Քիչ հետո. «Ի՞նչ օգուտ ինձ կոնդենի հսկայական կերպարանքից, ի՞նչ օգուտ Փարիզի փառավոր և ղեղիս դեմքից, Բեռլինի և Գերմանիայի մտածող և փիլիսոփայական պատկերից»։ Քիչ հետո. «Շատ պատահեցա գեղեցիկ և պատվական հոգու տեր մարդերի, որոնք դարձան ինձ շատ լավ ծանոթք, բայց նոքա պարապում էին կամ յուրյանց ազգային գործերով, կամ ընդհանուր մարդկության գործերով»։ «Հիշատակարանի» հետագա հատվածներում Նալբանդյանը դարձյալ նման բնույթի մի քանի ակնարկներ է անում, որոնցից և ոչ մեկը ծանոթագրված չէ, այնինչ դրա կարիքն անպայման կար։

Վեց ամսվա չափ մի ժամանակաշրջան է անցել Նալբանդյանի «Հիշատակարանի» նախորդ (1859 թ. փետրվար) և քննության ենթակա այս (1859 թ. օգոստոս) հատվածների միջև, և այս վեց ամիսները շատ բան են փոխել նրա կյանքում։ Մոսկվայում ու Պետերբուրգում մի որոշ ժամանակ մնալուց հետո Կոմսր ուղևորվել է արտասահման, եղել է Վարշավայում, Բեռլինում, Փարիզում, Լոնդոնում, Բրյուսելում, էսսենում ու եվրոպական ուրիշ քաղաքներում, ծանոթացել է կամ վերահաստատել է իր կապերը Ղևոնդ Ալիշանի, Ստեփան Ոսկանյանի, Ամբրոսիոս և Խորեն Գալֆայանների, Գերցենի, բացառված չէ նաև՝ Զերնիշևսկու հետ և այլն։ Ինչպես դժվար չէ կռահելը, Նալբանդյանի այս ուղևորության առաջնահերթ նպատակը ամենևին էլ «հանքային ջրերում դեգերվիլը» չէր, ինչ որ դիվանագիտորեն նշում է նա իր «Հիշատակարանում», այլ մի ավելի մեծ և համակողմանի ծրագրի իրականացումը, որի մասին հասարակական-քաղաքական այլևայլ պատճառներից ելնելով նա գերադասել է լռել և որը այսօրվա Նալբանդյանագիտությունը իր զգալի մասով կարողա-

⁴ Ա. Ինճիկյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1854, էջ 89։

ցել է բացահայտել⁵։ Արտասահմանյան իր գաղափարակից բարեկամներին էր ահա, Կոմսը բնորոշում «պատվական հոգու տեր մարդեր» ձևով։

Էջ 420. Խոսելով Փարիզում գործող «Հայկական դպրոցի» մասին, Նալբանդյանը (էջ 421) այն կոչում է նոր՝ «Հայկական ազգային վարժարան» ձևով, հիշեցնում է, որ «ձայներ կան, թե ազգը Կոստանդնուպոլսի մեջ կամի շուտով բարվոքել Փարիզու մեր ազգային դպրոցի վիճակը», հավելում է, որ կրթական այդ հաստատության հետ կապվող հարցերում եռանդաշատ գործունեություն էր ծավալում «նորընտիր հայրապետ Մատթեոսը», այսինքն՝ Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի (Չուխաշյան) կաթողիկոսը և ապա եզրակացնում է. «եվ ահա, Փարիզի հայկական դպրոցը կապվեցավ էջմիածնյան աթոռի հետ»։ Նպատակահարմար ենք գտնում ամբողջ այս հատվածը ծանոթագրել հետևյալ ձևով։

1855 թ. կեսերին, Վենետիկի Միսիթարյան միաբանության և կաթողիկե եկեղեցու հետ վերջնականապես գծոված և Փարիզի մի այլ թաղամասում բնակություն հաստատած Գաբրիել Ալվադովսկին, Ամբրոսիոս ու Խորեն Գալֆայան եղբայրները և Սարգիս Թեոֆիլյանը ձեռնամուխ եղան իրենց ուժերով ու հնարավորություններով Հայկական ազգային դպրոց հիմնելու աշխատանքներին։ Ըստ նախնական նպատակադրման, դպրոցը լինելու էր երկդասյա, այնտեղ ավանդվելու էին հայկական բնույթի մասնագիտական առարկաներ (հայոց պատմություն, հայ գրականություն, կրոն, Հայաստանի պատմական աշխարհագրություն), լեզուներ (հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն) և, որ կարևոր է, այնտեղ կարող էին ընդունվել գերազանցապես լուսավորչական հավատին պատկանող ընտանիքների երեխաներ։ Չորս վարդապետները շուտով կարողանում են հարմարավետ մի շինություն վարձել Փարիզի Գրենել արվարձանում (Ֆրանս. Grenelle. Նալբանդյանն օգտագործել է այդ անվան արտասանական ձևը. «Գրոլնել»), հավաքել տասներկու աշակերտներ, տալ իրենց կրթական հաստատությանը «Փարիզի հայկական դպրոց» բավականին համեստ անվանումը և նույն թվականի սեպտեմբերից ազդարարել նրա գոյության փաստը։

Այս հանգամանքը, սակայն, դպրոցի հիմնադիրների համար էլ անսպասելի կերպով, հասարակական-քաղաքական մեծ հնչեղություն ստացավ։ Մի դպրոց, որը գտնվում էր Փարիզում և, որ առանձնապես նշանակալի էր՝ որոշակիորեն հետևում էր հայ լուսավորչական դավանանքին, չէր կարող չհետաքրքրել հայության հոգևոր կենտրոնին՝ էջմիածնին և, մանավանդ, 1858 թ. մայիսի 17-ին կաթողիկոսական գալիսոնը ժառանգած Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցուն⁶, և վերջինս անհապաղ ձեռնամուխ է լինում վարժարանը էջմիածնի տնօրինությանը ենթարկելուն։ Դեռ 1857 թ. նրա եռանդուն նախաձեռնությամբ Պոլսում, Գրիգոր Օտյանի անմիջական ղեկավարությամբ, ստեղծվել էր «Փարիզի Հայկազյան վարժարանի օժանդակ ընկերություն»

⁵ Տե՛ս. Ա. Շ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 287—300 և հտ.։

⁶ Նալբանդյանի «Հիշատակարանի» այս հատվածը գրվել է 1859 թ. մայիսի 16-ին, այսինքն՝ Մատթեոս կաթողիկոսի ընտրությունից մեկ տարի հետո։ Այս է պատճառը, որ Նալբանդյանն ամենուրեք նրա մասին խոսում է «նորընտիր Հայրապետ», «նորընտիր ժայրագույն պատրիարք կաթողիկոս» և այլ ձևերով։

մշակութային կազմակերպությունը, բաղկացած պոլսեցի ութ մեծահարուստներից: Ընկերության նպատակն էր «Վարժարանի տնտեսական բարեկարգությանը, կանոնավոր շարունակությանը և առաջադեմ ղարգացմանը հսկել և ամեն պիտույքն ու գործերը հոգալ»: Կազմակերպությունը բարեհաջող կերպով կատարում էր իր գործերը⁷: Այս ժամանակվանից է ահա, որ դպրոցը պաշտոնապես ստանում է «Հայկական ազգային վարժարան» (երբեմն նաև՝ «Հայկազյան ազգային վարժարան») հորջորջումը:

Մատթեոս Ա.-ն այսքանով, սակայն, չբավարարվեց: Ճանապարհվելով Էջմիածին, վերջինս 1858 թ. դեկտեմբերի 16-ին հասնում է Պոլիս և այստեղ է մնում մինչև 1859 թ. հունվարի 2-ը: Այստեղ էլ, ահա, նա կարողանում է ընդունել վերահիշյալ ընկերության անդամներին և պարտավորեցնում է նրանց (օր. Տատյաններին, Երամյաններին, Աղաթոնյաններին), որ վերջիններս որքան կարելի է շուտ և հարուստ ֆինանսական օգնություն ցույց տան Փարիզի «Հայկական ազգային վարժարանին», ինչը և, բնականաբար, լիաբուռն խոստացվում է նրան: Թվում էր, թե ամեն ինչ արված է՝ ուսումնական այդ հաստատության հարատևությունն ապահովելու համար:

Սակայն իրադարձությունները զարգացան այլ ձևով: Շատ շուտով «սեղմվեց պոլսահայ ազգասերների քսակի բերանը» (Աշ. Հովհաննիսյան), որովհետև վերջիններս ոչ մի իմաստ ու նպատակ չէին տեսնում «Հայկական ազգային վարժարանը» տարիներ շարունակ «հենց այնպես» ֆինանսավորելու մեջ: Սրան ավելացավ աշակերտների մշտական սակավաթվությունը՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով, որովհետև Փարիզ, ուսումնառության մեկնող հայազգի «պարմանիները» սկզբնական կրթությունն արդեն ստացած էին լինում իրենց ծննդավայրերի ազգային դպրոցներում (հիշենք, որ 1860-ական թթ. Պոլիսն ուներ շուրջ երեսուն հայկական դպրոց, Թիֆլիսը՝ քսանհինգ, Ջմյուռնիան՝ չորս և այլն) և մեկնելով Փարիզ, աշխատում էին ստանալ ուսման «երկրորդ աստիճանը»: Այս ամենը «լրացրեց» վարժարանի տեսուչ Գաբրիել Ավագովսկին: Դեռ 1857 թ. նա ընդունեց Հարություն հալիպյանի առաջարկը՝ Թեոդոսիայում հայկական դպրոց բանալու վերաբերյալ և համապատասխան բանակցություններից հետո, 1858 թ. սկզբներին, մեկընդմիջությամբ Փարիզն ու իր տնօրինության ներքո գտնվող այդ կրթական հաստատությունը, ուղևորվեց Թեոդոսիա⁸, որի հետևանքով «անտեր» մնացած վարժարանի վիճակն ավելի ծանրացավ: Եվ եթե ավելացնենք, որ Վենետիկի Մխիթարյան միաբանության ամբողջ ղեկավարությունը և անձամբ աբբահայր Գեորգ Հյուրմյուզյանը անում էին ամեն ինչ, իրենցից «պառակտյալ» չորս վարդապետներին ու նրանց հիմնադրած դպրոցը վարկաբեկելու ու վատաբանելու համար, ապա հասկանալի կդառնա, թե ինչու «Հայկազյան ազ-

7 Ծ. Պոլսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 679—681:

8 Ի դեպ, այս է պատճառը, որ 1859 թ. կեսերին Փարիզում եղած նախնական, հանգամանորեն խոսելով «Հայկական ազգային վարժարանի մասին», դավատելով կամ քննադատելով այն գործունեությունը, որն այնտեղ ծավալել են «Ամբրոսիոս և Խորեն Դավթայան վարդապետքը», որոշ հուշեր պատմելով ինչպես նրանց, այնպես էլ Ալիշանի մասին, ոչ մի խոսքով չի հիշատակում Ավագովսկուն, որովհետև վերջինս մի ապուրց ավելի էր արդեն, ինչ Փարիզում չէր:

գային վարժարանը» պիտի գտնվեր հենց այն ողբալի վիճակում, ինչպես տեսել ու նկարագրել է Նալբանդյանը: Ավելացնենք, որ իր գոյությունը վերջնականապես գաղարեցրեց 1859 թ. նոյեմբերին, այսինքն Նալբանդյանի այնտեղ այցելելուց հենց մի քանի ամիս հետո:

Այս առիթով անհրաժեշտ էր նաև նշել, որ թե՛ նույն էջ 420-ում և թե՛ հետագայում Նալբանդյանը որոշակիորեն տարբերակում է Փարիզում գոյություն ունեցող երկու հայկական կրթական հաստատություններ. «Մուրատյան վարժարան և ազգային վարժարան» կամ՝ «Փարիզի մեջ կան երկու ազգային վարժարանք, միինը Մուրատյանը, իսկ մյուսը՝ Հայկական» և այլն: Մուրատյան վարժարանի վերաբերյալ Նալբանդյանի հաղորդածն ավելի ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ էր նշել հետևյալը: Մեծ դժվարությամբ ձեռք բերելով հնգկահայ հարուստներ Սամվել Մուրատյանի և Ռաֆայել Ղարամյանի՝ իրենց անունով դարոց բանալու համար կտակված գումարները, Վենետիկի Մխիթարյանները 1834 թ. սեպտեմբերի 4-ին, Պադուայում (Իտալիա) բացում են իրենց առաջին ուսումնական հաստատությունը «Մուրատյան ազգային վարժարան» անվամբ (առաջին տեսուչ՝ Իզնատիոս Փափազյան, սկզբում ունեին 12 աշակերտ): Սակայն վարժարանի և մանավանդ կտակի շուրջ ծայր առած հախուռն վեճերը, որոնց նպատակն էր որոշ սահմանափակումներ մտցնել այդ հարցում Մխիթարյանների իրավունքների մեջ, սկսում են անհանգստացնել ավստրիական կառավարությանը (Վենետիկի մարզն այդ ժամանակ գտնվում էր Ավստրիայի իշխանության ներքո): «Բարեկամների» դրամամբ, Ավստրիայի արտաքին գործերի մինիստր Կ. Մետտերնիխը պահանջում է Մխիթարյաններից՝ կառավարությանը զեկուցել ֆինանսական այն միջոցների մասին, որի վրա խարսխված է իրենց վարժարանի գոյությունը: Կռահելով, որ այդ պահանջը սահմանափակումներ մտցնելու առաջին քայլն է, միաբանության ղեկավարությունը որոշում է վարժարանը տեղափոխել Փարիզ: Նախապես բանակցելով Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ֆ. Գիզոյի հետ և ստանալով նրա դրական պատասխանը, Մխիթարյանները 1846 թ. հոկտեմբերին Փարիզում վերաբացում են մի քանի ամիս առաջ Պադուայում փակված իրենց վարժարանը, պահպանելով նախկին՝ «Մուրատյան» անվանումը (առաջին տեսուչ Սարգիս Թեոդորյան, ունեին 35 աշակերտ): «Մուրատյան վարժարանը» հաջողությամբ գոյություն ունեցավ մինչև 1870 թ. և 1859 թ., այսինքն այն ժամանակ, երբ նրանց էր այցելել Նալբանդյանը, գտնվում էր իր զարգացման ու բարգավաճման բարձր շրջանում:

Էջ 421. խոսելով այն մասին, որ հայ ազգը դեռ շարունակում է լուել Մխիթարյանների ազգադավ գործունեությունը տեսնելով, Նալբանդյանը հավելում է, որ ազգը «յուր լուծյամբ շատացնում է ազգի զավակներից պապականությունն գնացած զոհը Հյուրմյուզների ձեռքով»:

Մխիթարյան միաբանության արքահայր Գևորգ Հյուրմյուզյանի երկու կենսագրություն է մեզ հայտնի: Առաջինը՝ «Բազմավեպ», 1876 թ. էջ 97—112-ում տպագրված նրա մահվան առիթով և երկրորդը «Մխիթարյան հոբելյան» ժողովածուում (Վենետիկ, 1901, էջ 64—70): Նրկու կենսագրականներն էլ բավականաչափ նյութ են պարունակում նրա գործունեությունն ուրվագծելու համար, սակայն տառապում են մի էական պակասությունից. խիստ փառաբանական բնույթ ունեն և դա այնքան, որ չեն նկատված արքահայր հա-

սարակական-ազգային դործունեության մեջ տեղ գտած կոպիտ սխալներն անգամ, Այստեղ համառոտակի նշենք, որ Գևորգ Հյուրմյուզյանը ծնվել է Պոլսում, 1797 թ. նոյեմբերի 16-ին, ուսումնառության համար գալով Վենետիկ՝ աշակերտել է Արսեն Բադրատունուն, 1819 թ. հունվարի 17-ին անդամագրվել է Վենետիկի Մխիթարյան միաբանությանը, իսկ 1846 թ. հուլիսի 2-ին, «միաձայն հավանությամբն ժողովո» ընտրվում է միաբանության աբբահայր՝ Կոնստանտին Նեոֆիտի փոխարինելով մի քանի ամիս առաջ մահացած Սուքիաս Սոմալյանին և երեսուն տարի վարում է այդ «ծանրափափուկ» պարտականությունը։ Մահացել է 1876 թ. ապրիլի 11-ին, Վենետիկում։ Հիշատակելի աշխատություններից են Պիեր Կոնսելի «Պոլիկոտոս վկա հայկազն» և Ժան Ռասինի «Գոթոդիա» ողբերգությունների բնագրերից կատարված՝ զրաբար չափածո թարգմանությունները (Վենետիկ, 1858, 1862 թթ.), Շարլ Ռոլենի «Հնախոսություն» պատմական աշխատության «հայեցումը» (Վենետիկ, 1825—1829 թթ., վեց մեծադիր հատորներ) և մեկ-երկու ուրիշ գործեր։ «Բազմավեպի» էջերում էլ հրատարակել է կրոնաաստվածաբանական բնույթի հոդվածներ, թարգմանություններ, դրամատիկական ստեղծագործություններ, որոնց մեծ մասն այսօր պատմական արժեք ունի մեզ համար։

Իր աբբահայրության ընթացքում միաբանության բարգավաճման ու գոյատևման համար որոշ գործ անելով հանդերձ (հիշատակելի է նրա դերը 1848 թ. Վենետիկի ապստամբության ժամանակ, երբ կարողացավ ձկուն դիվանագիտությամբ փրկել միաբանությունը կործանման աղետից), Գևորգ Հյուրմյուզյանը, սակայն, վատ դրսևորեց իրեն համազգային-հասարակական խնդիրներում։ Վարելով վատիկանին ու պապին հաճոյանալու քաղաքականություն, Հյուրմյուզյանը ձեռնամուխ եղավ Սուրբատյան և Ռաֆայելյան վարժարանները Հռոմ տեղափոխելու աշխատանքներին, որը թեև նրան չհաջողվեց, բայց այդ առիթով ծայր առավ ազգային ամենալայն մասշտաբներ ընդունած մի բանավեճ, որը անվիճելի բացասական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի մտավոր-հասարակական կյանքում։ Ապա, իրեն դաշնակից ունենալով Անտոն Հասունյանին, Հյուրմյուզյանն աշխատեց որքան կարելի է կաթոլիկահաճ ներկայացնել Մխիթարյան միաբանությունը և այս առիթով ըստ ամենայնի սրեց կաթոլիկ—լուսավորչական՝ ընդհանուր առմամբ անպտուղ ու անիմաստ դավանաբանական պայքարը, որի հետևանքով ավելի խորացավ հայ ժողովրդի երկու հատվածների միջև եղած պառակտումը։ Նվ, վերջապես, Հյուրմյուզյանն իր աբբահայրության տարիներին շրջանառության մեջ դրեց մեծամիտ վարքագիծ, ուրիշներին և մանավանդ միաբանության տարեց անդամներին հաշվի չառնելու ու անտեսելու խոսքի մի եղանակ, իր «ընթացքի» մեջ համառելու, հաճախ ի վնաս ճշմարտության այդ համառությունը շարունակելու պախարակելի մի վարքագիծ, որը մեկից ավելի անգամ քննադատվեց ժամանակակիցների կողմից⁹։

Էջ 423. Խոսելով Փարիզյան տպավորությունների մասին, Նալբանդյանը գրում է. «Այն ամայացած տները... Խոռոն հոսանքով հիշեցնում են Լուդովիկոսները, Դյուբարրի, Մեթոն և Փոմփադուր սիրուհիքը»։ Քիչ ներքև. «Ես կանգնած էի մի այնպիսի տեղում, ուստի երևում էին գլխավոր պալատը,

⁹ Ա. Երիցյան, Վենետիկի Մխիթարյան, Քիֆլիս, 1883, էջ 66—73։

Մեծ և փոքր Տրիանոնները: Եվ... պիտի տեսաների անշուշտ, թե ինչպես անբաղդ պոլոնիացի Մարիա Լեշչինսկին դուրս էր գալիս Մեծ Տրիանոնից, անտառի և դիշերի առանձնության մեջ ողբալու յուր թշվառությունը... Պիտի տեսաների անշուշտ, թե ինչպես փոքր Տրիանոնի պատուհանում դրվում էր թագավորի սիրականի ձեռքով խորհրդավոր ճրագը, և թե ինչպես թույլ և մեղկ և կարդինալին ստրկացած Լյուդովիկոս տասնհինգերորդը դուրս էր գալիս պալատից, ոգևորված միայն այդ խորհրդական ճրագի լույսով...»:

Ինչպե՞ս պետք է մեկնաբանել այս ամբողջ պարբերությունը:

1715 թ. կեսերին, Փարիզում, Ֆրանսիայի նոր թագավոր Հուլակվեց հնգամյա Լյուդովիկոս XV-ը: Ի թիվս այլոց, հիմնական խնամակալի պարտականությունները հանձն առավ կարդինալ Անդրե-Էկյուզ Ֆլեորին (1653—1743), բնական խելքով օժտված, գործունյա ու եռանդուն, բայց զեղի ու շվայտ կյանքի սիրահար մի մարդ, որը տարիների ընթացքում կարողացավ վերջնականապես իրեն ենթարկել թագավորին, նրան ներարկելով բնավորության հենց այդ գծերը: Նրա ջանքերով ու թելադրությամբ էլ Լյուդովիկոս XV-ը 1725 թ. ամուսնացավ Ֆրանսիայում քաղաքական վտարանդի, Լեհաստանի թագավոր Ստանիսլավ Լեշչինսկու (1677—1766 թթ.) դստեր՝ Մարիա Լեշչինսկայի հետ, որպեսզի Ֆրանսիան իրավականորեն արդարացվող հիմք ունենա իր հավակնությունները նաև Լեհաստանի վրա տարածելու համար: Տարիները ընթացքում, սակայն, կարդինալ Ֆլեորիի հետևողական «դաստիարակություն» հետևանքով, Լյուդովիկոս XV-ի մոտ վճռականորեն սկսում է դերիշխել ոչ թե պետական գործիչը, այլ մարմնական հաճույքների ու շվայտ կյանքի սիրահար մեղկ ու թուլամորթ մարդը: Նյդպիսի մի առիթով թագավորը 1745 թ. պատահաբար ծանոթանում է Ժաննա-Անտուանետ Պոմպադուրի (1721—1764 թթ.)՝ բարձր կրթություն ստացած, իր ժամանակի երաժշտությանն ու գրականությանը քաջատեղյակ, նկարչության, երգեցողության, թատերական-բեմական արվեստի բնագավառում անառարկելի կարողություններ ունեցող, բայց ցուփ ու թեթևաբարո այդ զեղեցկուհու հետ, որը շուտով գտնում է նրա հոմանուհին, ապա և՛ պետական-քաղաքական գրեթե բոլոր գործերի միանձնյա տնօրինողն ու ղեկավարողը: «Շուրջ քսան տարի,— նրա մասին գրում էր Վոլտերը,— մարկիզուհի Պոմպադուրը վճռական դեր էր կատարում ոչ միայն Ֆրանսիայում, որն ամբողջությամբ գտնվում էր նրա ձեռքին, այլև ամբողջ Եվրոպայում: Թագավորի հոմանուհիներից մարկիզուհի Պոմպադուրը ամենափայլունն էր, ամենատաղանդավորը և ամենաանբարոյականը»¹⁰: Հիմնականում Պոմպադուրի համար էր, որ Լյուդովիկոս XV-ը հրամայեց Վերսալի վիթխարի զբոսայգում գտնվող և Ֆրանսիայի թագավորական բնտանիքների ամառային հանգստավայրը հանդիսացող «Մեծ Տրիանոն» անունը կրող պալատի կողքին կառուցել նորը՝ «Փոքր Տրիանոն», որտեղ էլ բնակվում էր նրա սիրուհին և որտեղ էլ տեղի էին ունենում նրանց «հանդիպումները» ըստ այն պայմանական նշանի, որը ակնարկում է նալբանդյանը:

Թագավորի այս գայթակղությունները, հասկանալի է, չէին կարող դուր գալ թագուհուն, պարկեշտ ու հեղաբարո Մարիա Լեշչինսկային, և նա օրհա-

¹⁰ Вольтер, Бог и люди, т. 2, М., 1961, стр. 437.

սական շանքեր է թափում վերջ տալու այդ բոլորին: Սակայն իզուր են անցնում նրա աղերսալից խնդրանքները, իզուր են անցնում թագուհու հոր՝ Ստանիսլավ Լեշչինսկու, իր փեսային տրվող բազում խրատներն ու հորդորները: Թագավորն ամեն ինչ շարունակում է նախկին ձևով: Մի բան, որը ներքին մեծագույն հուզումների և հոգեկան ծանր ապրումների պատճառ է դառնում թագուհու համար:

Մարկիզուհի Պոմպադուրի մահվանից հազիվ մի քանի տարի անց Լյուդովիկոս XV-ը գտնում է Մարի-Ժաննա Դյուբարրին (1746—1793 թթ.)՝ հասարակ ծագումով (պետական հարկահավաքի աղջիկ), աշխատանքային սովորական կենսագրություն ունեցող (ձևարար, ապա՝ կանացի հագուստեղեն գնող-վաճառող) մի տիկնոջ, որը 1769 թ. սկսած արդեն սկսում է երևալ պալատում և թագավորի միջավայրում: Դյուբարրին բոլոր տեսակետներից ավելի հոբբի մեծություն էր, քան մարկիզուհի Պոմպադուրը և այդ էր պատճառը, որ Լյուդովիկոս XV-ը կարողանում էր նրան միաժամանակ «համատեղել» իր մյուս սիրուհու՝ երիտասարդ, աշխույժ ու կենսաթրթիւ ժակլին Մենտենոնի (ֆրանսերեն՝ Maintenon. ինչպես և նախորդ դեպքում, այս անգամ էլ նախաձեռնողն օգտագործել է արտասանական ձևը՝ «Մեթնոն») հետ: Վերջինս էլ ավելի աննշան մեծություն էր, քան իր «մրցակիցը»՝ Դյուբարրին, իհարկե խոսք անգամ չի կարող լինել Պոմպադուրի հետ համեմատվելու մասին և, բնականաբար, ո՛չ նրա կարծիքները և ո՛չ էլ ձայնը ոչ ոքի համար նշանակություն չունեին: Լյուդովիկոս XV-ը Մենտենոնից վարակվեց ծաղիկ հիվանդությամբ, որը թագավորի մահվան պատճառ դարձավ (1774 թ.): Օգտագործելով այս բարեպատեհ առիթը, Ֆրանսիայի պալատական վերնախավը խստաշունչ քաղաքականություն վարեց թագավորի սիրուհիների նկատմամբ: Դյուբարրին ուղարկվեց մենաստան, միայնության և կրոնական ասկետիզմի մեջ քաղելու համար իր մեղքերը, իսկ Մենտենոնը պարզապես արտաքսվեց պալատից: Այս է նախաձեռնողն՝ վերևում բերված հատվածի ենթատեքստը, որը ծանոթագրված չլինելու հետևանքով անհասկանալի է մնում: Էլ չենք խոսում այն մասին, որ «Լյուդովիկոս XV», «Դյուբարրի», «Մենտենոն», «Պոմպադուր», «Մարիա Լեշչինսկա» անունները իրենց համապատասխան բացատրականներով «Անվանական բառարանում» չեն գետեղվել:

Նույն էջ 423-ում, անդրադառնալով Ֆրանսիայի «մրկալից պատմությանը» նախադրյանը հավելում է, որ այդ ամենը հառնում է իր աչքի առջև, «սկսած Լյուդովիկոս տասնչորսերորդից մինչև պոլիտիկական մեծ ավազակը»: Վերջին բառերի առթիվ տրված է հետևյալ ծանոթագրությունը (№ 67). «Ակնարկում է նապոլեոն Բոնապարտին»: Թույլ է տրված փոքրիկ անճշտություն: Նախադրյանը նկատի ունի ոչ թե պետական և հասարակական-քաղաքական ականավոր գործիչ, հռչակավոր գորավար նապոլեոն Բոնապարտ Առաջինին (1769—1821 թթ.), այլ նրա եղբորորդի Լուի-Նապոլեոն Բոնապարտին (1808—1873 թթ.): Վերջինս ամեն գնով իշխանության ձգտող քաղաքական կարիերիստի մի բնորոշ օրինակ է, որը բազում միջոցների դիմելուց հետո, 1851 թ. դեկտեմբերի 2-ին կարողացավ պետական հեղաշրջում կատարել Փարիզում և մի տարի անց, 1852 թ. դեկտեմբերի 2-ին իրեն հայտարարել Ֆրանսիայի կայսր՝ նապոլեոն Երրորդ հորջորջումով: Նրա՝ ինչպես ներպետական-ազդային, այնպես էլ արտաքին-քաղաքական գործունեությունը

նր ժամանակի առաջադիմական մտքի ներկայացուցիչների կողմից ծաղրի ու արհամարհանքի արժանացավ դեռ իր կենդանության օրոք և պիտակավորվեց ամենախիստ բառերով: Եվ Նալբանդյանի՝ իր «Հիշատակարանում» հայտնված աներկմիտ կարծիքը Նապոլեոն III-ի մասին գալիս է մի անգամ ևս ապացուցելու, որ այդ հարցում էլ նա կանգնած էր ժամանակի առաջադիմական գործիչների շարքում: Ավելացնենք նաև, որ «Անվանական բառարանում», Նախորդի նման, «Լյուդովիկոս XIV» անունը իր համապատասխան բացատրակայնով չկա:

Շարունակելով փարիզյան իր մտորումները և հիշատակելով «Թագուհիներից ամենաթշվառի,— Մարիա Անտուանետայի», «Ֆրանսիական պուրլիցիստ Մարտի», «Լյուդովիկոս տասնևվեցերորդի» անուններն ու դրվագներ նրանց կյանքից ու գործից,— անուններ, որոնք նույնպես «Անվանական բառարանում» տեղ չեն գտել, Նալբանդյանը (էջ 424), նկարագրելով Լյուդովիկոս XVI-ի և Մարի-Անտուանետի ողբերգական մահը, հավելում է. «Նոցա կտրված գլուխների հար և նման մոմեղենքը տեսած էի Լոնդոնում, մադամ Տյուսսոյի մոտ»:

Նալբանդյանը նկատի ունի Լոնդոնում գտնվող մոմե արձանների թանգարանատեր Մարի Տյուսսոյին: Վերջինս ծնվել է Բեռնում (Շվեյցարիա), 1760 թ. դեկտեմբերի 1-ին, ապա ուսումնառության համար փոխադրվել է Փարիզ և բնակություն հաստատել հորեղբոր՝ Ֆիլիպ Կուրտիսի մոտ: Մասնագիտությամբ իրավաբան, այս մարդը մի զավեշտական «հոբբի» ուներ: Ազատ ժամերին մոմից պատրաստում էր իր ընկերների, ծանոթ-բարեկամների, հեռու-մոտիկ հարազատների կիսանդրիները և պատրաստում էր մեծ հմտությամբ ու զարմանալի նմանությամբ: Փոքրիկ Մարին նրանից սովորեց այդ «մասնագիտությունը», աստիճանաբար ավելի խորացրեց ու կատարելագործեց այն և 1795 թ. հոկտեմբերին ամուսնանալով Ֆրենսիս Տյուսսոյի հետ, նրան էլ ընդգրկեց այդ աշխատանքների մեջ: Առաջին ցուցահանդեսը, որը տրվեց 1802 թ. Լոնդոնում և դիտողների կողմից արժանացավ դրվատանքի, միտք ծնեց սեփական կայուն թանգարան ունենալու մասին, որը պաշտոնապես իր գոյությունն սկսեց Լոնդոնում՝ 1833 թ., «Մադամ Տյուսսոյի թանգարան» անունով: Եվ շնայած տիկին Տյուսսոն մի քանի տարի անց մահացավ (1850 թ. ապրիլի 16), բայց նրա գործը հետևողականորեն շարունակեցին որդիներն ու թոռները և թանգարանը շարունակեց հարաճուն կերպով զարգանալ ու բարգավաճել: Նալբանդյանի հիշատակած Լյուդովիկոս XVI-ի և Մարի-Անտուանետ թագուհու կտրված գլուխների «հար և նման մոմեղենքը» գտնվում են «Մադամ Տյուսսոյի թանգարանի» հանրաճանաչ սրահներից մեկում՝ «Վերսալյան սրահում», որն ի դեպ, եղած սրահներից ամենահինն է և որտեղ էլ նրանք անխաթար վիճակում շարունակում են մնալ առ այսօր:

«Հիշատակարանի» այս՝ քննության առկա հատվածի դեռ սկզբում (էջ 421), հատվածի բովանդակությունը ներկայացնող վերնագրում, խոսելով թ. Կրկոնիկյանի «Ընդունելություն ընծայի» գրքի մասին, Նալբանդյանը գրում է, որ նրան որպես պատասխան արդեն լույս է տեսել «ընդդեմ մի թերթի»: Քիչ հետո (էջ 436), անդրադառնալով այդ «մի թերթին», նա հրատարակում է իր միանգամայն որոշակի ու աներկմիտ կարծիքը, այսինքն՝ «Այդ թերթի յուրաքանչյուր տողերից դուրս է նայում մի ծերացած զորություն, որ յուր մանկու-

թյան ժամանակ ևս չէ հատկացած մի պնդումը մեք. ամենազորավոր, պատասխանին, որ լսում ենք ժերմանի հոր բերանից, այս է. «պապյան եղիր որ խալսիս»: Երկարատև պրպտումներից հետո, Նալբանդյանի ակնարկած այդ «մի թերթը» կարողացանք գտնել Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում¹¹, Դա մի գեհեկաբանություն է, որն իր նման երկրորդը չունի հայ գրականության մեջ: Նրա հետ թեկուզ ամենաընդհանուր ծանոթությունը առավել քան հստակորեն ի հայտ է բերում հեղինակի՝ Գրիգոր Խաչատրյանի բանավիճելու խիստ ինքնատիպ եղանակը, նրա «բարձր» մակարդակը իբրև պոլեմիստի և հասկանալի է դառնում թե՛ Նալբանդյանի՝ այդ «գրախոսականին» տրված «մի թուղթ» արհամարհական բնութագրականը, և թե՛ նրա բացասական կարծիքի պատճառը:

Եջ 438. վերլուծելով Ստեփան Ոսկանյանի գործունեությունը, Նալբանդյանը հավելում է, որ վերջինս «քանի մի ժամանակ սորանից հառաջ հրատարակելով «Արևելք» անուն օրագիր (խափանված մի հայ ճիզվիթի դարանագործությամբ, ամո՞թ և խայտառակություն այդ սևահոգի անպիտանին), այժմ հրատարակում է «Արևմուտք» անունով կիսամասդիրը»:

«Արևելք» պարբերականի՝ «մի հայ ճիզվիթի» կողմից խափանվելու պատմությունը, որն այնպես շարժել է Նալբանդյանի զայրույթը և արժանացել վերոհիշյալ խստաշունչ տողերին, բացահայտվում է տպարանատեր Ճանիկ Արամյանի՝ «Փարիզ» շաբաթաթերթում հրատարակված «Մասնավոր հայտարարություն» օգնությամբ, որն ուշագրավ փաստաթուղթ է նրա աշխարհայացքային ոգորումները հասկանալու համար: «Մեր տպարանն ելած «Արևմուտք» անուն թերթի շարագրին հետ (նկատի ունի Ստեփան Ոսկանյանին—Մ. Շ.) ամենևին հաղորդակցություն չունեինք տարիներն ի վեր,—գրում էր Ճանիկ Արամյանը,— ուստի ոչ անոր սկզբանց հետևող, կամ անոր գրությանց (իմա՝ հոդվածներին—Մ. Շ.) հավանող էինք»:

Պատմելով, որ «Արևմուտքի» հրատարակությունը հովանավորում էր փարիզահայերի ջանքերով ստեղծված մշակութային ընկերությունը և որ, հետեվաբար, ինքն իրավունք չունեի իր անձնական «նախաձեռնությամբ» դադարեցնելու «Արևմուտքը», թեև այդ շատ կուղենար անել, քանզի այնտեղ տպագրվող հոդվածները սոսկ «սրբապղծական հայհոյությունք» էին, Ճանիկ Արամյանը շարունակում է, անելով հետևյալ կարևոր հավելումը. «Հրապարակավ ծանուցանեմք արգո հասարակության, որ ոչ միայն «Արևմուտքի» հոդվածները մեր սկզբանցը դեմ էր, այլև ատենով «Արևելք» անուն հանդեսի Ժեթերթը չտպելուն մասնավոր պատճառ եղանք, աղաչելով մեծապատիվ Հակոբ էֆենդիին, որ նամակ մը գրե առ շարագիրն ու կերպիվ իմն արգիլե ղայն: Մեծապատիվ էֆենդին հանձն առավ գրել»¹²:

Այսպես ուրեմն, «Արևելք» պարբերականի «Ժեթերթը» այսինքն՝ վերջին համարը չի տպագրվել և հետևաբար պարբերականը դադարել է Ճանիկ Արամյանի հատուկ ջանասիրության շնորհիվ, որն այդ անել կարողանալու համար դիմել է «Հակոբ էֆենդիին», այսինքն՝ Փարիզի թուրքական դեսպանատան աշխատակից, օտարալեզու (ոչ թուրքերեն) հրատարակությունների պետական վերաքննիչ (ցենզոր) Հակոբ էֆենդի Կրճիկյանին: Արամյանի այս

¹¹ Կաթողիկոսական դիվան, թղթ. № 185, վավ. № 110:

¹² «Փարիզ», 1860 թ., № 1 («Մասնավոր հայտարարություն»):

եռանդը հասկանալի կդառնա, եթե հիշենք, որ «Արևելքի» հենց այդ՝ այսինքն «ԺԵ Թերթում» էր, որ պետք է հրատարակվեր Ոսկանյանի «Առ պարոն Հակոբ Կրճիկյան» հրապարակախոսական փայլուն հոդվածը, որտեղ նա սպանիչ սարկազմի հասնող երգիծանքով ներկայացնում է Կրճիկյանի գործունեությունը. մի հոդված, որի հրապարակելը ուղղափառ տպարանատիրոջ համար «ապստամբ դրություններից» մեծագույնը կլիներ:

Իրադարձությունների հետագա զարգացումը հասկանալուն մեզ օգնում է Ոսկանյանի վերոհիշյալ «Առ պարոն Հակոբ Կրճիկյան» հոդվածը, որը նա այնուամենայնիվ հրատարակեց հետագայում, իր հաջորդ պարբերականի՝ «Արևմուտքի» 1859 թ. № 7-ում: Ճանիկ Արամյանը «Արևելքի» վերջին ամսատետրակը խափանելու և հետևաբար այն դադարեցնելու վերաբերյալ իր արարքն ավելի կայուն հիմքերի վրա դնելու համար դիմում է նաև Գ. Այվազովսկու օգնությանը, որը ոչ միայն Հակոբ Կրճիկյանի մտերիմ ընկերն ու բարեկամն էր, այլև նրա խորհրդատուն: Հասնանալն է. որ Ոսկանյանի կողմից մի քանի անգամ նշտրակահար եղած Այվազովսկին հենց այն մարդն էր, որն առավել ջանասիրությամբ զննատարեր իր վրա դրված «հանձնարարությունը», այսինքն՝ համոզել Կրճիկյանին որքան կարելի է հիմնովին դադարեցնել թե՛ «Արևելքի» հիշատակված համարը և թե՛ այդ պարբերականն առհասարակ, ինչը և արվում է: Այս էր ակնարկում Ոսկանյանը, երբ հետագայում, դառնություններ արձանագրում էր, որ տարիների հեռավորությունը «գործություն չունի մեզ մոռնալ տալ Այվազովսկիի մի և Կրճիկյանի մի ըրածը...»:

Այսպիսին է Նալբանդյանի «Հիշատակարանի» վերևում բերված տողերի ենթիմաստը: Այս բացատրականը արդեն հնարավորություն է ընձեռում հասկանալու «Հիշատակարանի» 440-րդ էջում տպագրված հետևյալ պարբերությունը. «Լսում ենք, որ ամենայն ազգից կարգված են քննիչը (ցենզոր) և ինչպես պատմում են, մեր ազգից կարգված պարոնը առավել խիստ վարվում է հեղինակների հետ, քան թե պահանջում էր Թյուրքիայի խարխալյալ կառավարությունը: ...Մենք բողոքում ենք այդպիսի քննիչների ընդդեմ և խնդրում ենք... տեղի չտալ անձնական կրքերի ու ախտերի, երբ որ պիտո էր կատարել յուր պաշտոնը»: Այս հատվածից դժվար չէ կոհսել նախ՝ որ Նալբանդյանն ակնարկում է հենց Հակոբ Կրճիկյանին, որն այդ ժամանակաշրջանում վարում էր այն պաշտոնը, որը նշված է: Այսպես հասկանալի է դառնում վերջինիս՝ իր աշխատանքային պարտականություններն տգնվաբար կատարելը «անձնական կրքերով ու ախտերով» փոխարինելու մասին Նալբանդյանի ակնարկը:

СНОВА О «ДНЕВНИКЕ» М. НАЛБАНДЯНА

Кандидат филол. наук С. А. ШТИКЯН

(Резюме)

Среди произведений Налбандяна особое место занимает его «Дневник», изданный в 1945 г. с комментариями налбандяноведа Ншана Мурадяна. Несмотря на тщательную и кропотливую работу издателя, в «Дневнике» еще есть упоминания событий, фактов, общественных деятелей, нуждающиеся в разъяснениях. Предлагаемые примечания и дополнения помогут более глубокому изучению «Дневника».